ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/95

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 12.11.2018թ. բողոքը և «Գդակ» ՍՊԸ-ի 19.11.2018թ. համանման բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/95 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 12.11.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դերձակի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ), որին ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1.1 կետով սահմանվել է, որ գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայության ձեռքբերումը (այսուհետ նաև՝ ծառայություն), որը խմբավորված է 4 չափաբաժիններում՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ բամբակյա, կեպիով
2	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ ձմեռային դաշտային
3	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ ձմեռային դաշտային
4	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ ձմեռային դաշտային

✓ Հրավերի 2.5 կետի համաձայն՝ Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում համազգեստների, կոստյումների դերձակի ծառայության մատուցման պայմանագրերը:

✓ Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում, համաձայն որի.

«1. Կոստյում բամբակյա կեպիով (լրակազմ)

Համազգեստը բաղկացած է բաճկոնից, տաբատից և կեպիից:

Բաճկոնը միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով 5 օղակ կոճակներով, որից վերևից առաջինը կոճակը կոճկվում է բաց կոճկվածքով, իսկ 4 օղակ կոճակները գաղտնի կենտրոնական կոճկվածքով: Բաճկոնն ունի 5սմ լայնությամբ ծալովի ուղղանկյունաձև կանգունակով օձիք: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում մշակված են վրադիր չորս գրպաններ՝ կափույրներով, որոնցից երկուսը կրծքամասում ծավալուն, իսկ երկուսը՝ կողային՝ վրադիր: Կրծքամասում մշակված են կափույրներով վրադիր երկու գրպաններ, որոնք տեղակայված են 55 աստիճան դեպի ներս թեքությամբ՝ կենտրոնական ուղղահայաց կարից 1,5 սմ հեռավորության վրա:

Կրծքամասի գրպանի լայնությունը 14,5 սմ, երկարությունը 16 սմ: Կրծքամասի վրադիր գրպանների կափույրների վերնամասում կրծքանշանները փակցնելու համար, կարվում են 13X 2.5 սմ չափի կպչուն ժապավեններ:

Առաջամասի կողային վրադիր գրպանների լայնությունը 17,5 սմ, երկարությունը 16,5 սմ, կափույրի լայնությունը 6 սմ: Գրպանները տեղադրված են բաճկոնի ներքին եզրից 3 սմ բարձրության վրա: Հեռավորությունը աջ և ձախ փեշերի ուղղահայաց եզրերից՝ համաձայն տեխնիկական պայմանի:Առաջամասի գրպանները կոճկվում են գաղտնի

կոճկվածքով՝ 2 օղակ կոճակով: Գոտկատեղում մշակված են, 4 սմ լայնության ներկարված 2 ախլակներ՝ իրանի հարմարեցման չափերի կարգավորման համար: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով:

Թևքերի վրա մշակված են կափույրով ծավալուն վրադիր գրպաններ, որոնք կափույրի երկայնքով կոճկվում են, 2սմ լայնության կպչուն ժապավենով: Գրպանների թեքությունը դեպի ներս, ուսակարերի նկատմամբ՝ 120 աստիճան: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0,5սմ լայնությամբ կարով: Աջ և ձախ թևքերի ծավալուն վրադիր գրպանների կենտրոնում կարվում են 7,5 սմ տրամագծով կպչուն ժապավեններ:Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են, լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև արմնկակալներ:

Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով:

Թևքերի ներքևի մասում մշակված են եռանկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են մեկ օղակով և երկու կոճակով: Կպչուն ժապավենները պետք է լինեն պաշտպանական գույնի կամ շագանակագույն:

Տաբատը ուղիղ ձևվածքով է, մշակված գոտիով: Գուլֆիկը գաղտնի կոճկվածքով՝ 3 օղակ կոճակով: Առաջամասում կողքից, թեք ներկարված գրպաններ: Գոտին մշակված է 7 կամրջակով և գոտու չափը կարգավորող ներկարված 2 ախլակներով: Կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով: Կողքերից մշակված են կափույրով ծավալուն եռածալ վրադիր գրպաններ: Կափույրների առաջամասը վերևից և ներքևից ֆիքսված է ամրակարով, իսկ հետնամասից կոճկվում են գաղտնի կոճկվածքով 1 օղակ կոճակով: Գրպանի լայնությունը 20 սմ, երկարությունը 24 սմ, եռածալ, ծալքերի լայնությունը 5 սմ, ծալքերը, ներքևից 2 սմ բարձրության վրա ամրակարված են:: Գրպանի վերնամասը (բերանը) մշակված է 1 սմ լայնությամբ զարդակարով:

Տաբատի առաջամասում գրպանների ներքևի եզրերից մշակված են (եզրը՝ ներսից դուրս, 6 սմ շեղությամբ) քառանկյուն ծնկակալներ, եզրերը կարված զույգ կարերով: Նստատեղը մշակված է օվալաձև կրկնակի կտորից՝ զարդակարված 0,7սմ լայնությամբ կրկնակի կարով: Տաբատի փողքերի ներսամասում կարվում է կարգավորվող երկու կոճակ օղակներով փողքաժապավեն: Ներսի, դրսի և հետնամասի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով:

Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով:

Համազգեստի կոճակները՝ 18մմ տրամագծի, պատրաստված ջերմակայուն (չհալվող) նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկողմանի կարվող, գույնը՝ պաշտպանական:

Կեպին աստառով է, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Հետնամասում, կեպիի չափը փոփոխելու համար մշակված է պաշտպանական գույնի պլաստմասե կարգավորիչ: Հովհարը միանում է գլխարկին կտորի կողեզրերով: Հովհարին միջադրված է պլաստմասե միջադիր: Աստառի կողմից ճակատային մասին տեղադրված է 5.7X 4.5 սմ չափի արհեստական կաշվե կտոր:

Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: չափսերը՝ 44/2 մինչև 64/6 չափս-հասակի:

Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ, որի վրա պետք է նշված լինի.

Արտադրող կազմակերպության անվանումը

Չափս-հասակը

Կտորի բաղադրությունը

Լվացքի մեքենայով լվանալուց

Ջրի ջերմաստիճանը մինչև 300C:

Գունավոր հագուստի համար նախատեսված լվացող նյութերով:

Ձեռքով լվացքի դեպքում

Ջրի ջերմաստիճանը մինչև 300C:

Գունավոր հագուստի համար նախատեսված լվացող նյութերով:

Պարզաջրել մաքուր գոլ ջրով, չմզել:

Չ'ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՍՊԻՏԱԿԵՑՆՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

Անհրաժեշտության դեպքում արդուկել ցածր ջերմաստիճանով

Արտադրված է Հայաստանի Հանրապետությունում

ՊԻՏԱԿԸ Չ'ՀԵՌԱՑՆԵԼ

Բաճկոնի ձախակողմյան փեշին, ներքևի եզրից 3 սմ բարձրության վրա, ներսի կողմից պետք է լինի տպագրական ներկով դրոշմ: Դրոշմի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Թույլատրելի շեղումը՝ 2%:

Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանում:Չափսերի շեղումները համաձայն արտադրման տեխնիկական պայմանների: Պատվիրատուի կողմից տրամադրվում է երեսացուի գործվածքը, մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն կտորի ծախսի և մնացորդների վերաբերյալ: Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի:

2.4. Կոստյում՝ ձմեռային դաշտային (լրակազմ) Ձմեռային կոստյումը բաղկացած է բաճկոնից և անդրավարտիքից: Բաճկոնի առաջամասի և հետևամասի ներդիրը մշակվում է անջրաթափանց արհեստական կտորով երկկողմանի մգդակարված 300 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, թևքերը՝ անջրաթափանց արհեստական կտորով երկկողմանի մգդակարված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Ասրառացուն մշակվում է 70 գրամ մակերեսային խտությամբ արհեստական կտորից:

Բաճկոնի թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով: Զարդակարի լայնությունը 0,6 սմ: Առաջամասերում գոտկատեղից ներքև և բաճկոնի ներքին եզրից 5,5սմ բարձրության վրա մշակված են վրադիր կողային գրպաններ կափույրներով՝ կողից և վերևից մուտքերով: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0,6սմ լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0,1 սմ կարի լայնությամբ: Կափույրները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ 2 օղակ 15մմ տրամագծով կոճակով: Կափույրի լայնությունը 5,5-6 սմ, գրպանի լայնությունը 19,5-20 սմ, երկարությունը՝ 21 սմ:Գրպանների երեսամասը կտորի հակառակ կողմից (ներսից) մշակված է սև կամ մուգ կապույտ գույնի ֆլիզե կամ համարժեք գործվացք: Աջ և ձախ թևքերի ծավալուն վրադիր գրպանների կենտրոնում կարվում են 7,5 սմ տրամագծով կպչուն ժապավեններ: Կպչուն ժապավենները պետք է լինեն պաշտպանական գույնի կամ շագանակագույն: Բաճկոնը ունի ներկարված թևքեր: Թևքերի վրա մշակված են վրադիր, կափույրով ծավալուն թեք գրպաններ, կափույրները կոճկվում են 1,5սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Թևքերի արմնկամասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով վրադիր արմնկակալներ: Թևքերի բազուկային մասում մշակված են եզրաշերտերի միջով անցնող էլաստիկ ժապավենից ամրացրած պատաներ, որոնք կոճկվում են օղակով և 2հատ 15մմ տրամագծով կոճակներով:

Բաճկոնը կոճկվում է շղթայով և 6 հատ 20մմ տրամագծով կոճակօղակներով: Մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Եզրաշերտի վրա, վերևից 15 սմ ներքև ամրացվում է կամրջակի միջով անցնող 4,5սմ լայնությամբ պատա՝ կոչման տարբերանշանի համար, ներքևի ծայրը եզրաշերտին ամրացվում է կպչուն ժապավենով:Պատայի վերին եզրին

հավասար աջ և ձախ մասերում կրծքամասում, կրծքանշանները փակցնելու համար, կարվում են 13,0 x 2,5-3 սմ չափսերի կպչուն ժապավեններ:

Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ 2սմ: Թևքի ներքևի մասը ներսի կողմից մշակված է 10 սմ երկարությամբ էլաստիկ տրիկոտաժե մանժետով (բազկակալով)՝կողից բթամատի բացվածքով:

Բաճկոնը ներսի կողմից գոտկատեղի ուղղությամբ մշակվում է անջրաթափանց արհեստական գործվածքից քամապաշտպան շերտով՝ 18-20սմ լայնությամբ: Այն եզրից մշակվում է 2-2,5 սմ լայնությամբ էլաստիկ ժապավենով, որը առաջամասում կոճկվում է 15մմ տրամագծով 3 կոճակ-օղակով:

Վզատեղը մշակված է օձիքով: Օձիքը ունի կտրած կանգունակ: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ:

Բաճկոնին միացված է անջրաթափանց արհեստական գործվածքից գլխանոց:

Լանջափեշատակում մշակված է ծոցագրպան ատրճանակի համար: Գրպանի ներսից ամրացվում է քուղ՝ մետաղական բռնակով:

Բաճկոնի աստառի աջ կրծքամասում մշակված է ծոցագրպան՝ շերտիկով, որը կոճկվում է մեկ օղակով և կոճակով:

Բաճկոնին կոճկվում է հանովի մորթե օձիք,որը կոճկվում է 5 օղակներով և բաճկոնի օձիքին կարված 5 հատ 15մմ տրամագծով կոճակներով:

Օձիքը կոճկվում է բաճկոնին, լրացուցիչ շերտին մշակված 5 օղակներով և բաճկոնին կարված 5 հատ 15մմ տրամագծով կոճակներով: Օձիքի մորթու 1մ2 մակերեսային խտությունը՝ 730 գրամ +/-50գ/ մ2, խավի բարձրությունը՝ 12մմ ոչ պակաս, գույնը՝ մոխրագույն: Մորթե օձիքի վզատեղի եզրը եզրակարված է երեսացուի կտորի եզրաշերտով:

Անդրավարտիքը մշակված է գոտիով՝ զարդակարված շեղանկյուն ձևով: Առաջամասը կողքի թեք կտրված գրպաններով է: Կողքերից մշակված են կափույրով ծավալուն եռածալ վրադիր գրպաններ: Կափույրների առաջամասը ֆիքսված է ամրակարով, իսկ հետնամասից կոճկվում են գաղտնի կոճկվածքով 1 օղակ15մմ տրամագծով կոճակով: Գրպանի լայնությունը 20 սմ, երկարությունը 24 սմ, եռածալ, ծալքերի լայնությունը 5 սմ, ծալքերը ներքևից 2 սմ ամրակարված: Գրպանի վերնամասը (բերանը) մշակված է 1 սմ լայնությամբ զարդակարով:

Գոտու վրա տեղադրված են 5 կամրջակներ և գոտու չափը կարգավորող 2 ախլակներ, կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի կարի վրա:Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 հատ15մմ տրամագծով կոճակով: Առաջամասում մշակված են ծնկակալեր: Անդրավարտիքը կոճկվում է գաղտնի կոճկվածքով, /գուլֆիկով/ 5 հատ 15մմ տրամագծով օղակ կոճակներով, որից երկուսը գոտու վրա են: Անդրավարտիքը ներքնամասում կապվում է կապիչներով:

Անդրավարտիքի ներդիրը մշակվում է 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մգդակարված է աստառացուի հետ՝ ներքին եզրից 15 սմ բարձրության վրա:

Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Բաճկոնի աստառացուի ձախակողմյան փեշի ներքին եզրից 15սմ բարձրության վրա կողակարին կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ, որի վրա պետք է նշված լինի տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը: Թույլատրելի շեղումը՝ 2%:

Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հատի մեջ 2 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Պատվիրատուի կողմից տրամադրվում է երեսացուի գործվածքը, մատակարարումից առնվազն մեկ

ամիս առաջ: Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն կտորի ծախսի և մնացորդների վերաբերյալ: Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի: »

✓ Հրավերին կից պայմանագրի անբաժանել մաս հանդիսացող N 6 հավելվածով սահմանվել է, որ ծառայություն մատուցող ընկերությանը նյութերը տրամադրվել է պատվիրատուի կողմից: Մասնավորապես, սահմանվել է ծառայությունների համար պատվիրատուի կողմից ըստ ապրանքատեսակների տրամադրվող նյութերի ցանկը, համաձայն որի՝

Հ/Հ	Ապրանքատեսակի անվանումը	Տրամադրվող նյութեր	Ծախսը միավորի համար
1	Կոստյում՝ բամբակյա, կեպիով	Երեսացուի գործվածք	1.5 լայնքով 3.6 գ/մ
2-4	Կոստյում՝ ձմեռային դաշտային	Երեսացուի գործվածք	1.5 լայնքով 4.07 գ/մ

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի, 24.09.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ ՀՀ ՊՆ կարիքների համար «դերձակի ծառայություններ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել «Դերձակ» ՍՊԸ-ն, «Գլորիա ԿՖ» ՍՊԸ-ն, «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն, «ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ-ն, «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն և «Քանաքեռի ԿՖ» ՍՊԸ-ն:

Վերը նշված արձանագրության 4.1-ի համաձայն՝ 02.10.2018թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա Ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն, որին նույն արձանագրության 4.2-ով առաջարկվել է Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր ներկայացնել:

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է մի շարք ապրանքների գնման պայմանգրեր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է ամենամեծ գին ունեցող Ընկերության կողմից ներկայացրած «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախախարության միջև 20.05.2016թ. կնքված պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պետական գնման թիվ ՇՀԱՊՁԲ-7/48-3 պայմանագիրը: Նշված պայմանագրի գինը կազմում է 71 451 600 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 10.10.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն.

«Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և դրանցում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

-Մասնակցի կողմից ներկայացվել է նմանատիպ 1 պայմանգիր, որը թեև պատշաճ կատարված է, բայց դրա շրջանակներում մատակարարվել են ապրանքներ (կոստյումներ), իսկ «դերձակի ծառայությունների» ձեռքբերման համար, նույն ընթացակարգի հրավերով, պահանջվում է ներկայացնել «դերձակի ծառայությունների» մատուցման պատշաճ կատարված պայմանագիր (պայմանագրեր): Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվեց և գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցին ծանուցվեց սահմանված ժամկետում շտկելու անհամապատասխանությունը, ինչին ի պատասպախան «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն և մի քանի այլ պայմանագրեր (ապրանքների մատակարարման), որոնք գնահատող հանձնաժողովի կողմից չքննարկվեցին» :

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն 15.10.2018թ. գրությամբ տեղեկացրել է, որ Ընթացակարգին վերջինիս կողմից ներկայացված պայմանագրերով մատակարարվել է «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի սեփական արտադրանքը:

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն նշել է, որ իրացման նպատակով դուրս գրված հարկային հաշիվները E-invoicing համակարգում և ընդհանրապես բաժանվում են 2 խմբի՝ ծառայությունների մատուցման հարկային հաշիվ, որն իր մեջ ներառում է ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման հարկային հաշիվներ և

ապրանքների մատակարարման հարկային հաշիվներ, որը ներառում է ապրանքների և արտադրանքների մատակարարումները: Հետևաբար կարի արտադրանքը իր մեջ ներառում է դերձակի գործունեություն, որից էլ ըստ «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի հետևում է, որ ներկայացված պայմանգրերում ներառված է դերձակի ծառայությունը:

Հիմք ընդունելով «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի վերոնշյալ գրությունը՝ գնահատող հանձնաժողովի անդամներ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյանը (ԳԱՊ) և ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյանը որոշեցին մասնակցի ներկայացված պայմանագիրը (ՇՀԱՊՁԲ-7/48-3) համարել համապատասխանող Ընթացակարգի հրավերի պայմաններին, իսկ գնահատող հանձնաժողովի անդամ ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյանի կարծիքով «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի ներկայացրած պայմանագիրը չի համապատասխանում հրավերի պայմաններին, ուստի վերջինս դեմ է քվեարկել որոշմանը և ներկայացրեց հատուկ կարծիք:»

ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյանի 18.10.2018թ. կազմված հատուկ կարծիքի համաձայն՝ վերջինս հանդիսանալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայցված որակավորման փաստաթղթերի վերաբերյալ հայտնել է իր կարծիքը, որ ներկայացված նմանատիպ պայմանագրերը հանդիսանում են ապրանքների մատակարարման պայմանագրեր, իսկ հրավերով պահանջվել է դերձակի ծառայության մատուցման պայմանագիր: Ուստի Վ. Պապյանը նշել է, որ դեմ է քվեարկում՝ համարելով, որ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի որակավորման փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պայմաններին:

Թիվ 5 արձանագրության համաձայն՝ 05.11.2018թ. ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Սիմոնյանի կողմից տրված իրավական եզրակացության համաձայն, ներկայցված մատակարարման պայմանագիրը (ՇՀԱՊՁԲ-7/48-3) գնահատող հանձնաժողովի կողմից որպես «փորձառության չափանիշ» հիմք ընդունելն իրավաչափ է:

Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ 06.11.2018թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան Ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի

կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի համաձայն, մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը

գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պահանջները չեն սահմանվում հրավերով, և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Համաձայն Ընթացակարգի Հրավերի 2.5 կետի՝ Մասնակցին ներկայացվող՝

1) <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ

պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում համազգեստների, կոստյումների դերձակի ծառայության մատուցման պայմանագրերը:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը ակնհայտորեն չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին հետևյալ հիմնավորմամբ.

Նախ, «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության և Ընկերության միջև 20.05.2016թ. կնքված ՇՀԱՊՁԲ-7/48-3 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր, մինչդեռ Ընթացակարգի հրավերի 2.5 կետի համաձայն՝ Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում համազգեստների, կոստյումների դերձակի ծառայության մատուցման պայմանագրերը: Որից հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված պայմանագիրը գնահատել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և 10.10.2018թ. կայացված նիստում միաձայն որոշվել է Ընկերությանը առաջարկվել է շտկել առկա անհամապատասխանությունը: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի արձագրությամբ արձանագրել է, որ մասնակցի կողմից ներկայացվել է նմանատիպ պայմանագիր, որը թեև պատշաճ կատարված է, բայց դրա շրջանակներում մատակարարվել են ապրանքներ (կոստյումներ), իսկ «դերձակի ծառայությունների» ձեռքբերման համար, նույն ընթացակարգի հրավերով, պահանջվում է ներկայացնել «դերձակի ծառայությունների» մատուցման պատշաճ կատարված պայմանագիր (պայմանագրեր): Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սակայն Ընկերության կողմից 15.10.2018թ. ներկայցվել է բացատրական գրություն, որին կցվել են կրկին ապրանքների մատակարաման այլ պայմանագրեր: Այսինքն փաստացիորեն «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել գնահատող հանձնաժողովի պահանջը, չի կատարվել պահանջված շտկումը և դերձակի ծառայությունների մատուցման պայմանագրեր կրկին չեն ներկայացվել: Այս

տեսանկյունից գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 48-րդ կետի պահանջները, քանի որ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն փաստացիորեն չի կատարել գնահատող հանձնաժողովի կողմից պահանջված շտկումը, սակայն գնահատող հանձնաժողովը նման պայմաններում Ընկերության հայտը գնահատել է բավարար: Բողոքը քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ նույն կարծիքի է եղել նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամ ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյանը, ում կարծիքով «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի ներկայացրած պայմանագիրը չի համապատասխանում հրավերի պայմաններին, ուստի վերջինս դեմ է քվեարկել որոշմանը և ներկայացրել հատուկ կարծիք:»

Տվյալ պարագայում կարևոր է «ծառայությունների մատուցումը» և «ապրանքների մատակարարումը» հասկացությունների սահմանման հստակեցումը, ինչպես նաև հայտարարված Ընթացակարգով և ներկայացված մատակարարման պայմանագրով գնման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագրերի վերլուծությունը: Վերոհիշյալի ուսումնասիրությունից կրկին ակնհայտ է, որ «համազգեստների, կոստյումների դերձակի ծառայությունների մատուցումը» չի կարող նույնականացվել «համազգեստների, կոստյումների մատակարարումը» փորձառության չափանիշի հետ, այսինքն նշված երկու կատեգորիաները դասվում են տարբեր տնտեսական գործունեության խմբերի: Օրինակ՝ լինելով համազգեստների, կոստյումների մատակարարումն իրականացնող ընկերություն, կարող է և չունենալ համազգեստների, կոստյումների դերձակի ծառայություն իրականացնելու հնարավորություն, փորձառություն: Բացի այդ, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը ուզում ենք հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարության պատշտոնական www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված գնումների միասնական անվանացանկին (CPV կոդեր), որտեղ հստակ տարանջատված է ծառայությունների մատուցման և ապրանքների մատակարարման CPV կոդերը (դերձակի ծառայության կոդ՝ 98391120), այսինքն նշվածները հանդիսանում են տարբեր տնտեսական գործունեության խմբեր, ինչը հիմք է հանդիսանում վստահ լինելու, որը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի ներկայացրած

որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին համապատասխան գնահատելու և վերջինիս Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից: Ակնհայտ է, որ «համազգեստների, կոստյումների դերձակի ծառայությունների մատուցումը» չի կարող նույնականացվել «համազգեստների, կոստյումների մատակարարումը» փորձառության չափանիշի հետ, դրանք տարբեր տնտեսական խմբեր են:

Եվ վերջապես, պետք է նկատի ունենալ, որ եթե անգամ գնահատող հանձնաժողովը գտել է, որ համազգեստների, կոստյումների մատակարարման պայմանագիրը կարող է համարվել համանման համազգեստների, կոստյումների դերձակի ծառայությունների մատուցման պայմանագրի համար, ապա այստեղ ակնհայտորեն առկա է պայմանագրի գների հետ կապված խնդիր:

Մասնավորապես, Ընթացակարգի հրավերով պահանջվել է միայն դերձակի ծառայության մատուցում, իսկ համազգեստի պատրաստման նյութը տրամադրվելու էր պատվիրատուի կողմից: Մինչդեռ «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից որպես համանման ներկայացված «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախախարության միջև 20.05.2016թ. կնքված պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պետական գնման թիվ ՇՀԱՊՁԲ-7/48-3 պայմանագրի համաձայն՝ պայմանագրի գնի՝ 71 451 600 ՀՀ դրամի մեջ ներառված է թե՛ համազգեստ կարելը՝ դերձակի ծառայությունը (եթե անգամ «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն իրականում կարել է նշված համազգեստները) և թե՛ համազգեստի նյութի գինը: Այդ մասին նաև նշել է «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն՝ իր գնահատող հանձնաժողովին ուղղված 15.10.2018թ. գրությամբ, որով հայտնել է, որ մատակարարման պայմանագրերում ներառված է նաև դերձակի ծառայությունը: Մինչդեռ գնահատող հանձնաժողովի կողմից անգամ փորձ չի կատարվել պարզելու, թե «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախախարության միջև 20.05.2016թ. կնքված պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պետական գնման թիվ ՇՀԱՊՁԲ-7/48-3 գնման պայմանագրի 71 451 600 ՀՀ դրամի մեջ որքան է կազմում դերձակի ծառայության գինը, և փաստացիորեն դերձակի ծառայության գնի մեջ հաշվարկվել է նաև համազգեստի նյութի գինը, քանի որ հիմք է ընդունվել ներկայացրած թիվ ՇՀԱՊՁԲ-7/48-

3 պայմանագրի ողջ գինը: Այս տեսանկյունից էլ գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ համանման համարվող պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը հաշվելիս:

Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 10.10.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը բավարար գնահատելու, ինչպես նաև «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ին ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելու մասին որոշումները:

«Քանաքեռի կարի ֆաբրիկան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.11.2018թ. ժամը 10:30-ին և 21.11.2018թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«Գդակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

«ԳԴԱԿ» ՍՊԸ-ն ԳԲԽ-ԱՄ-2018/95 բողոքի շրջանակներում 19.11.2018թ. ներկայացված համանման բողոքով հայտնել է հետևյալը.

««Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 12.11.2018թ. բողոք է ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումների մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մինչև բողոքի

վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք:

Ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով՝ «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն ներկայացնում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումների դեպ համանման բողոք:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.4-րդ կետի և 2.5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն.

2.4 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

2.5 Մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում համազգեստների, կոստյումների դերձակի ծառայության մատուցման պայմանագրերը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:
Հրավերին անբաժանելի մաս կազմող պայմանագրի թիվ 6 հավելվածով սահմավել է, որ ծառայություն մատուցող ընկերությանը նյութերը տրամադրվել է պատվիրատուի կողմից:
Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն և «Էլաամոդա» ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Ընկերություն/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ 24.09.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Էլաամոդա» ՍՊԸ-ն, իսկ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղ զբաղեցրած՝ «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն:

Նույն ածանագրության 4.2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6>> ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

«ԳԴԱԿ» ՍՊԸ-ն 17.10.2018թ. թիվ 6 գրությամբ դիմում է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և խնդրել է տրամադրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Էլաամոդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերի պայմաններին իր համապատասխանությունը հավաստող որակավորման փաստաթղթերը:

Ի պատասխան վերոգրյալ գրության՝ Պատվիրատուն 18.10.2018թ. տրամադրել է գրության մեջ նշված փաստաթղթերը:

Վերը նշված՝ «Էլաամոդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով նախատեսված, որպես կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ մասնագիտական փորձառությունը հիմնավորող նախկինում կատարված նմանատիպ պայմանագրեր ներկայացրել է միայն ապրանքների, այլ ոչ թե ծառայության մատուցման պայմանագրեր:

Բացի այդ, օրինակ՝ որպես նմանատիպ ներկայացված ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլաամոդա» ՍՊԸ-ի միջև կնքված 16.02.2017թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-7/21-6» ծածկագրով պայմանագրի տնտեսական դասակարգման կոդը՝ CPV, չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում պահանջվող դասակարգման կոդին՝ CPV-ին, ուստի տվյալ պարագայում այս պայմանագիրը չի կարող համարվել նմանատիպ:

Հրավերին կից պայմանագրի անբաժանել մաս հանդիսացող N 6 հավելվածով սահմանվել է, որ ծառայություն մատուցող ընկերությանը նյութերը տրամադրվել է պատվիրատուի կողմից:

Հանձնաժողովի 10.10.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին <<Էլաամոդա>> ՍՊԸ-ի համապաստասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և դրանցում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացվել է նմանատիպ 1 պայմանգիր, որը թեև պատշաճ կատարված է, բայց դրա շրջանակներում մատակարարվել են ապրանքներ (կոստյումներ), իսկ «դերձակի ծառայությունների» ձեռքբերման համար, նույն ընթացակարգի հրավերով, պահանջվում է ներկայացնել «դերձակի ծառայությունների» մատուցման պատշաճ կատարված պայմանագիր (պայմանագրեր): Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել և գնումների մասին ՀՀ օրենդրությամբ

սահմանված կարգով մասնակցին ծանուցվել և առաջարկվել է սահմանված ժամկետում շտկելու անհամապատասխանությունները: Ի պատասպախան ծանուցման <<ԷԼԱԱՄՈԴԱ>> ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն և մի քանի այլ պայմանագրեր (ապրանքների մատակարարման), որոնք գնահատող հանձնաժողովի կողմից չեն քննարկվել:

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն 15.10.2018թ. գրությամբ տեղեկացրել է, որ Ընթացակարգին վերջինիս կողմից ներկայացված պայմանագրերով մատակարարվել է Ընկերության սեփական արտադրանքը և իրացման նպատակով դուրս գրված հարկային հաշիվները E-invoicing համակարգում և ընդհանրապես բաժանվում են 2 խմբի՝ ծառայությունների մատուցման հարկային հաշիվ, որն իր մեջ ներառում է ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման հարկային հաշիվներ և ապրանքների մատակարարման հարկային հաշիվներ, որը ներառում է ապրանքների և արտադրանքների մատակարարումները: Հետևաբար կարի արտադրանքը իր մեջ ներառում է դերձակի գործունեություն, որից էլ ըստ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի հետևում է, որ ներկայացված պայմանգրերում ներառված է նաև դերձակի ծառայությունը:

Հանձնաժողովը հիմք ընդունելով «Էլաամոդա» ՍՊԸ-ի վերոնշյալ գրությունը՝ նույն գնահատող հանձնաժողովի անդամներ Հ. Մելիքյանը և Գ. Ուստյանը որոշեցին մասնակցի ներկայացված պայմանագիրը (ՇՀԱՊՁԲ-7/48-3 ծածկագրով պայմանագիր) համարել համապատասխանող ընթացակարգի հրավերի պայմաններին, իսկ գնահատող հանձնաժողովի անդամ Վ. Պապյանի կարծիքով <<ԷԼԱԱՄՈԴԱ>> ՍՊԸ-ի ներկայացրած պայմանագիրը չի համապատասխանում հրավերի պայմաններին, ուստի վերջինս դեմ է քվեարկել որոշմանը և ներկայացրեց հատուկ կարծիք:

Հանձնաժողովի անդամ Վ. Պապյանը 18.10.2018թ. հայտնել է իր կարծիքը այն մասին, որ <<ԷԼԱԱՄՈԴԱ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերը հանդիսանում են ապրանքների մատակարարման պայմանագրեր, իսկ հրավերով պահանջվել է դերձակի ծառայության մատուցման պայմանագիր: Ուստի Վ. Պապյանը դեմ է քվեարկել՝ համարելով, որ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի որակավորման փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված որակավորման պայմաններին:

Բացի այդ, Հանձնաժողովի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Պատվիրատուի իրավաբանական վարչության պետի կողմից 05.11.2018թ. տրված իրավական եզրակացության համաձայն, Ընկերության կողմից ներկայցված մատակարարման պայմանագիրը (ՇՀԱՊՁԲ-7/48-3) գնահատող հանձնաժողովի կողմից որպես <<փորձառության չափանիշ>> հիմք ընդունելն իրավաչափ է:

Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ 06.11.2018թ. Հանձնաժողովը որոշել է «Էլաամոդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը՝ գնահատել Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և Ընկերությանը Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ճանաչել ընտրված/հաղթող/ մասնակից:

Բողոքի իրավական հիմքերը.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման

չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի

պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պահանջները չեն սահմանվում հրավերով, և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Այսպիսով, «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն, Ընթացակարգի թիվ 3 հավելվածով նախատեսված՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ընթացակարգի որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարության համաձայն, հայտնել և հավաստել է, որ բավարարում է <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6>> ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի հրավերի 2 մասի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված՝

1) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-

ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Ընկերության կողմից ներկայացվել է թիվ 5 հավելվածը: Հավելվածին կից ներկայացվել է նաև «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով նախատեսված, որպես կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ մասնագիտական փորձառությունը հիմնավորող նախկինում կատարված նմանատիպ պայմանագրեր: Սակայն Ընկերության կողմից ներկայացված բոլոր պայմանագրերը հանդիսանում էին ապրանքների մատակարարման, այլ ոչ թե՝ ծառայության մատուցման պայմանագրեր:

Բացի այդ, Հանձնաժողովը իր 10.10.2018թ. արձանագրությամբ արձանագրել է, որ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նմանատիպ պայմանագիր, որը թեև պատշաճ կատարված է, բայց դրա շրջանակներում մատակարարվել են ապրանքներ, իսկ գնման ընթացակարգի հրավերով պահանջվել է ներկայացնել ծառայությունների մատուցման կատարված պայմանագիր:

Ցանկանում ենք նաև նշել, որ նույնիսկ եթե Հանձնաժողովը որոշել է հրավերի պահանջներին համապատասխան գնահատել Ընկերության պայմանագրերը, ապա այս պարագայում անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն ինքն է իր ռեսուրսներով կարել և մատակարարել ապրանքները: Այս դեպքում անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի վերջինս ներկայացնի կտորի ձեռքբերման գինը, ապա արդեն դրա շրջանակներում ներկայացնի քանի աշխատակցի և ինչ աշխատավարձի դիմաց է կատարվել այդ աշխատանքները: Սակայն գնահատող հանձնաժողովը չի փորձել սպառել բոլոր հնարավոր միջոցները պարզելու համար, Ընկերությունը որպես դերձակի ծառայություն ինչ գումարի սահմաններում է իրականացրել նշված ծառայությունները, ապա այդ ապրանքների մատուցման պայմանագրից արդեն առանձնացնել ծառայությունների մատուցման արժեքը: Այս գործողություններից հետո, եթե «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի ներկայացրած պայմանագիրը գումարային արտահայտված կլիներ վերջինիս գնային առաջարկի հիսուն տոկոսից ոչ պակաս, ապա կարելի էր փորձել դիտարկել դրա հրավերի պայմաններին համապատասխան գնահատելու տարբերակը:

Օրենսդիրը հստակ սահմանել է մասնագիտական փորձառության պանանջները, այն առանձնացնելով ըստ գնման տեսակների՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների: Պատվիրատուն գնման ընթացակարգ հայտարարում է համապատասխանաբար ըստ գնման տեսակի: Այս դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է դերձակի ծառայությունների մատուցման ընթացակարգ և այդ գնման տեսակից ելնելով որպես հրավերով նախատեսված մասնագիտական փորձառության որակավորման չափանիշ սահմանել է ծառայությունների մատուցումը: Ի դեպ, նշված որակավորման չափանիշերը խտրական չէ սահմանված, որովհետև նույն գնման ընթացակարգի մյուս մասնակիցները ունեն ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Ինչ վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարարության այն դիրքորոշմանը, որ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների միջև գնային տարբերությունը մոտավոր կազմում է մի քանի միլիոն ՀՀ դրամ և <<Էլաամոդա>> ՍՊԸ-ի հայտը մերժելու պարագայում պետական բյուջեն կարող է ավելի թանկ գնով կնքել պայմանագրեր, ապա այս պարագայում առաջին հերթին անհրաժեշտ է փոխել ՀՀ կառավարության 526-Ն որոշումը, քանի որ նշված որոշմամբ է ամրագրված մասնագիտական փորձառության որակավորման չափանիշի գնահատման կարգը, քանի որ եթե ուշադրություն դարձնել միայն գումարային գնահատմանը, ապա կարող է մեկ այլ մասնակից, որը չի ունենա նմանիպ պայմանագրեր կամ այլ որակավորման չափանիշի մասով չի համապատասխանի վերը նշված որոշմամբ սահմանված գնահատման կարգին, ապա Պատվիրատուն կարող է հաղթող ճանաչել այդպիսի մասնակիցներին և արձանագրել այն փաստը, որ վերջինիս կողմից միայն ներկայացված գնային առաջակն է համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին և միայն գնային առաջարկի հիման վրա առաջարկի կնքել պայմանագիր:

Ելնելով վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ նմանատիպ պայմանագրերը, գնահատելով

հրավերի պահանջներին համապատասխան՝ Հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, ինչի արդյունքում խախտվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 5-րդ, 6-րդ մասերով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 61-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վորոգրյալից՝ «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել.

1. 24.09.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ «Էլամոդա» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը,

2. 10.10.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը բավարար գնահատելու և վերջինիս ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելու մասին որոշումները:

«Գդակ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով 21.11.2018թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին, ովքեր հայտնել են համանման բողոքով ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) 16.11.2018թ. թիվ ԴՎԱ/4512 գրությամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է

ներկայացրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Պատվիրատուի կողմից բողոքների վերաբերյալ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.11.2018թ. ժամը 10:30-ին և 21.11.2018թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 16.11.2018թ. ժամը 10:30-ին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի հանձնաժողովին ուղղված գրությունը, մասնակցի ներկայացրած պայմանագիրը համարել է ընթացակարգի հրավերի պայմաններին համապատասխանող, քանի որ Ընկերությունը գրությամբ տեղեկացրել է, որ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրով մատակարարվել է Ընկերության սեփական արտադրանքը:

4. ԳԲԽ-ԱՄ-2018/95 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/95 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

2. Մրցույթի հրավերի ՄԱՍ Ի-ի 1.1 կետով սահմանվել է, որ գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայության ձեռքբերումը:

3. Մրցույթի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5 կետով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման համար

Մրցույթի իմաստով նմանատիպ են համարվում համազգեստների, կոստյումների դերձակի ծառայության մատուցման պայմանագրերը:

4. Մրցույթին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով կայացված որոշմամբ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի թիվ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

6. «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագիր ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի միջև 20.05.2016թ. կնքված ապրանքների մատակարարման պետական գնման թիվ «ՇՀԱՊՁԲ-7/48-3» պայմանագիրը, որի գինը կազմում է 71 451 600 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

7.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացվել է նմանատիպ 1 պայմանագիր, որը թեև պատշաճ կատարված է, բայց դրա շրջանակներում մատակարարվել են ապրանքներ (կոստյումներ), իսկ դերձակի ծառայությունների ձեռքբերման համար, նույն ընթացակարգի հրավերով, պահանջվում է ներկայացնել «դերձակի ծառայությունների» մատուցման պատշաճ կատարված պայմանագիր (պայմանագրեր):

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է և գնումների օրենդրությամբ սահմանված կարգով մասնակցին ծանուցվել է սահմանված ժամկետում շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, ինչին ի պատասպախան՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն և մի քանի այլ պայմանագրեր

(ապրանքների մատակարարման), որոնք գնահատող հանձնաժողովի կողմից չեն քննարկվել:

Հիմք ընդունելով «ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի վերոնշյալ գրությունը՝ գնահատող հանձնաժողովը մասնակցի ներկայացված պայմանագիրը (ՇՀԱՊՁԲ-7/48-3) համարել է Ընթացակարգի հրավերի պայմաններին համապատասխանող:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովի անդամ Վ. Պապյանի կարծիքով «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի ներկայացրած պայմանագիրը չի համապատասխանում հրավերի պայմաններին, ուստի վերջինս դեմ է քվեարկել որոշմանը և ներկայացրել է հատուկ կարծիք, որի համաձայն՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի ներկայացված նմանատիպ պայմանագիրը հանդիսանում է ապրանքների մատակարարման պայմանագիր, իսկ հրավերով պահանջվել է դերձակի ծառայության մատուցման պայմանագիր: Ուստի վերջինս դեմ է քվեարկել՝ համարելով, որ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի որակավորման փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պայմաններին:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետի կողմից տրված իրավական եզրակացության համաձայն՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մատակարարման պայմանագիրը (ՇՀԱՊՁԲ-7/48-3) գնահատող հանձնաժողովի կողմից որպես «փորձառության չափանիշ» հիմք ընդունելն իրավաչափ է:

8. Նույն արձանագրության 1.2 կետով կայացված որոշմամբ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատվել է Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և վերջինս Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է ընտրված/հաղթող/ մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 12.11.2018թ. բողոքը՝ կից փաստաթղթերով և

«Գդակ» ՍՊԸ-ի 19.11.2018թ. համանման բողոքը, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 29.11.2018թ. թիվ 14-2/74900-18 գրությունը, Մրցույթի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3)....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Մրցույթի հրավերի ՄԱՍ Ի-ի 1.1 կետով սահմանվել է, որ գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայության ձեռքբերումը:

Մրցույթի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

<u>Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում համազգեստների, կոստյումների դերձակի ծառայության մատուցման պայմանագրերը:</u>

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի)

պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. ***մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները***:

Հրավերին կից պայմանագրի անբաժանել մաս հանդիսացող N 6 հավելվածով սահմանվել է, որ **ծառայություն մատուցող ընկերությանը նյութերը տրամադրվել է պատվիրատուի կողմից**:

Մրցույթին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով կայացված որոշմամբ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի թիվ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագիր ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի միջև 20.05.2016թ. կնքված ապրանքների մատակարարման պետական գնման թիվ «ՇՀԱՊՁԲ-7/48-3» պայմանագիրը, որի գինը կազմում է 71 451 600 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացվել է նմանատիպ 1 պայմանագիր, որը թեև պատշաճ կատարված է, բայց դրա շրջանակներում մատակարարվել են ապրանքներ (կոստյումներ), իսկ դերձակի ծառայությունների ձեռքբերման համար, նույն ընթացակարգի հրավերով, պահանջվում է ներկայացնել «դերձակի ծառայությունների» մատուցման պատշաճ կատարված պայմանագիր (պայմանագրեր):

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է և գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցին ծանուցվել է վերոհիշյալ անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ, որին ի պատասպախան՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն և մի քանի այլ պայմանագրեր (ապրանքների մատակարարման), որոնք գնահատող հանձնաժողովի կողմից չեն քննարկվել:

Հիմք ընդունելով «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի վերոնշյալ գրությունը՝ գնահատող հանձնաժողովը մասնակցի ներկայացված պայմանագիրը (ՇՀԱՊՁԲ-7/48-3) համարել է Ընթացակարգի հրավերի պայմաններին համապատասխանող:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովի անդամ Վ. Պապյանի կարծիքով «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի ներկայացրած պայմանագիրը չի համապատասխանում հրավերի պայմաններին, ուստի վերջինս դեմ է քվեարկել որոշմանը և ներկայացրել է հատուկ կարծիք, որի համաձայն՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի ներկայացված նմանատիպ պայմանագիրը հանդիսանում է ապրանքների մատակարարման պայմանագիր, իսկ հրավերով պահանջվել է դերձակի ծառայության մատուցման պայմանագիր: Ուստի վերջինս դեմ է քվեարկել՝ համարելով, որ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի որակավորման փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պայմաններին:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետի կողմից տրված իրավական եզրակացության համաձայն՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված մատակարարման պայմանագիրը (ՇՀԱՊՁԲ-7/48-3) գնահատող հանձնաժողովի կողմից որպես «փորձառության չափանիշ» հիմք ընդունելն իրավաչափ է:

Նույն արձանագրության 1.2 կետով կայացված որոշմամբ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատվել է Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և վերջինս Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է ընտրված/հաղթող/ մասնակից:

Այսպես՝ Օրենսդիրը հստակ սահմանել է «Մասնագիտական փորձառության» պահանջները, այն առանձնացնելով ըստ գնման տեսակների՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների: Պատվիրատուն գնման ընթացակարգը հայտարարում է համապատասխանաբար ըստ գնման տեսակի: Տվյալ դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որով նախատեսվել է դերձակի ծառայությունների ձեռքբերում և այդ գնման տեսակից ելնելով որպես հրավերով նախատեսված մասնագիտական փորձառության որակավորման չափանիշ սահմանվել է, որ Մրցույթի իմաստով նմանատիպ են համարվում ***համազգեստների, կոստյումների դերձակի ծառայության մատուցման պայմանագրերը:***

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագիր Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի միջև 20.05.2016թ. կնքված 71 451 600 ՀՀ դրամ ընդհանուր գնով պետական գնման թիվ «ՇՀԱՊՁԲ-7/48-3» պայմանագիրը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն Կարգի 47-րդ կետով արձանագրված անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցմանն ի պատասխան՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 15.10.2018թ. գրությամբ տեղեկացրել է, որ Ընթացակարգին վերջինիս կողմից ներկայացված պայմանագրերով մատակարարվել է «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի սեփական արտադրանքը: «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն նշել է նաև, որ իրացման նպատակով դուրս գրված հարկային հաշիվները E-invoicing համակարգում և ընդհանրապես բաժանվում են 2 խմբի՝ ծառայությունների մատուցման հարկային հաշիվ, որն իր մեջ ներառում է ծառայությունների մատուցման և

աշխատանքների կատարման հարկային հաշիվներ և ապրանքների մատակարարման հարկային հաշիվներ, որը ներառում է ապրանքների և արտադրանքների մատակարարումները: Հետևաբար կարի արտադրանքը իր մեջ ներառում է դերձակի գործունեություն, որից էլ ըստ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի հետևում է, որ ներկայացված պայմանագրերում ներառված է դերձակի ծառայությունը:

Այսպես, համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 521-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների ***մատակարարման պայմանագրով*** ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ***մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները*** պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին:

Օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջների համաձայն՝ ***ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն)***, իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար: Սույն գլխի կանոնները կիրառվում են կապի, բժշկական, անասնաբուժական, աուդիտորական, խորհրդատվական, տեղեկատվական, ուսուցման, զբոսաշրջիկության և այլ ծառայությունների պայմանագրերի նկատմամբ:

Օրենսգրքի 778-րդ հոդվածի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ ***կատարողը պարտավոր է ծառայությունները մատուցել անձամբ, եթե այլ բան նախատեսված չէ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով***:

Այսպիսով, «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից 15.10.2018թ. գրությամբ ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու նպատակով, անհրաժեշտություն էր առաջացել «ծառայությունների մատուցումը» և «ապրանքների մատակարարումը» հասկացությունների սահմանման հստակեցմամբ որոշելու «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով մրցույթի շրջանակներում որպես նմանատիպ ներկայացված պայմանագրի բնույթը, ինչով էլ պայմանավորված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 22.11.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/21380-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել հետևյալը.

««ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի միջև 20.05.2016թ. կնքված թիվ ՇՀԱՊՁԲ-7/48-3 ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագրի շրջանակներում «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն մատակարարել է իր արտադրած, թե՝ գնած ապրանքները»:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 29.11.2018թ. թիվ 14-2/74900-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊԵԿ ՕՀ վարչության աշխատակիցների կողմից իրականացված ՕՀ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ պաշտպանության նախաարարության և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00889965) միջև 20.05.2016թ-ին կնքված թիվ ՇՀԱՊՁԲ-7/48-3 ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագրով, ընկերության կողմից ՊՆ-ին մատակարարված շուրջ 71 451 600 ՀՀ դրամ արժեքով (ներառյալ ԱԱՀ-ն) ապրանքատեսակները չեն արտադրվել անմիջապես ընկերության կողմից, այլ ձեռք են բերվել «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ից (ՀՎՀՀ 03804898), համաձայն՝ վերջինիս հետ 14.06.2016թ-ին կնքված 70 004 640 ՀՀ դրամ արժեքով (ներառյալ ԱԱՀ-ն) ապրանքների մատակարարման պայմանագրի, որը հաստատվել է ընկերության հաշվապահական փաստաթղթերի և ՀՀ ՊԵԿ SS բազայում առկա տեղեկատության հետազոտմամբ:

Այսպիսով, վերոգրյալով պայմանավորված, արձանագրում եմ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից որպես մասնագիտական փորձառությունը հիմնավորող նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախաարարության և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի միջև 20.05.2016թ-ին կնքված թիվ ՇՀԱՊՁԲ-7/48-3 պայմանագիրը, որի շրջանակներում Ընկերությունը փաստացի մատակարարել է իր կողմից գնված ապրանքները, այսինքն՝ նշված պայմանագրում, որն իր բնույթով հանդիսանում է մատակարարման պայմանագիր, ներառված չէ դերձակի ծառայությունը, ուստի նման փաստական հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, որ նշված պայմանագիրը չի կարող սույն Մրցույթի իմաստով համարվել նմանատիպ, քանի որ Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում դերձակի ծառայության մատուցման պայմանագրերը:

Այսպես, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետով սահմանվում է, որ ***գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:***

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը չի բավարարում Կարգի 61-րդ կետի 1-ի կետով, Մրցույթի հրավերի 2.5 կետով սահմանված պահանջներին, ուստի գտնում եմ, որ Պատվիրատուն սույն մասով բավարար գնահատելով «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի հայտը գործել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 48-րդ կետով, Կարգի 61-րդ կետով, Կարգի 65-րդ կետով, ինչպես նաև Մրցույթի Հրավերի 2.5 կետով սահմանված պահանջների խախտմամբ, ուստի նման պայմաններում, գտնում եմ, որ բողոքները հիմնավոր են և ենթակա են բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 12.11.2018թ. ներկայացված բողոքը և «Գդակ» ՍՊԸ-ի կողմից 19.11.2018թ. ներկայացված համանման բողոքը բավարարել, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.09.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը,

2. Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթի

գնահատող հանձնաժողովին դադարեցնել 10.10.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը բավարար գնահատելու, ինչպես նաև «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ին ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ